



## **«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ԱՆՎԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ**

### ***ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ***

1. Սույն կարգով սահմանվում են «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության, այսուհետ՝ «Բանկ», կողմից անկախ աուդիտորական կազմակերպությունների ընտրությանը ներկայացվող պահանջները և չափանիշները, մրցութային առաջարկությունների գնահատման մեթոդը, ինչպես նաև մրցույթների կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգն ու ժամանակացույցը:

2. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացությունների իմաստները նախատեսված են ՀՀ «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով:

3. Բանկի կողմից աուդիտորական կազմակերպության ընտրությունը կատարվում է ՀՀ «Բանկերի և բանկային գործունեության մասին», ՀՀ «Աուդիտորական գործունեության մասին», ՀՀ «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքների, ինչպես նաև աուդիտորական գործունեությանը վերաբերող նորմեր պարունակող այլ օրենքներով և ակտերով, սույն կարգով սահմանված դրույթների համաձայն:

4. Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության վերաբերյալ մրցույթին կարող են մասնակցել միայն աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող աուդիտորական կազմակերպությունները:

5. Մրցույթի կազմակերպման և անցկացման նպատակով, նախքան մրցույթի մասին ծանուցման հրապարակվելը, Բանկի վարչության նախագահի հրամանով ստեղծվում է Հանձնաժողով, որի կազմը չի կարող պակաս լինել երեք հոգուց: Հանձնաժողովը հաստատում է մրցույթի մասին հրապարակային ծանուցման տեքստը, Հանձնաժողովը բացում և գնահատում է մրցույթի հայտերը, ինչպես նաև որոշում է մրցույթի հաղթողին: Հանձնաժողովը որոշումներ ընդունում է ձայների պարզ մեծամասնությամբ:

### ***ԲԱԺԻՆ II. ԱՆՎԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅՄԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ***

6. Մրցույթին կարող են մասնակցել բանկերում առնվազն 5 տարվա աուդիտորական աշխատանքի փորձ ունեցող աուդիտորական կազմակերպությունները: Ընդ որում, 5 տարվա աուդիտորական աշխատանքի փորձի պահանջը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող /ըստ եկամտաբերության, կատարված աշխատանքի ու հաճախորդների ծավալի լավագույն 10 աուդիտորական կազմակերպությունների շարքից/ աուդիտորական կազմակերպությունների վրա:

7. Բանկն անկախ աուդիտորական կազմակերպության ընտրություն կատարելիս առաջնորդվում է նաև հետևյալ չափանիշներով՝

7.1. աուդիտորական կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում և/կամ միջազգային ճանաչումը /հեղինակությունը/:

7.2. աուդիտորական կազմակերպության և աուդիտորների անկախությունը՝ ըստ ՀՀ «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետի:

7.3. աուդիտ իրականացնող խմբի ղեկավարի, աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների որակավորման մակարդակը և աշխատանքային փորձը: Նշված անձինք պետք է ունենան աուդիտորի որակավորման վկայական և բանկերում առնվազն 3 տարվա աուդիտորական աշխատանքի փորձ:

7.4. աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների /ներառյալ աուդիտ իրականացնող խմբի ղեկավարի/ միջազգային հաշվապահական որակավորում /Էյ-Սի-Սի-Էյ, Փի-Սի-Էյ և այլն/ ունեցող մասնագետների նվազագույն քանակի ապահովումը, որը յուրաքանչյուր անգամ նշվում է հրապարակային ծանուցման մեջ:

7.5. աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների /ներառյալ աուդիտ իրականացնող խմբի ղեկավարի/ մասնագիտական գործունեության ծախսողման կամ պայմանագրով ամրագրված պարտականությունների չկատարման ռիսկի ապահովագրության առկայությունը՝ ռսիկերի բավարար փոխհատուցման պահանջի տեսքով, որը ամրագրվում է Բանկի և անկախ աուդիտորական կազմակերպության միջև կնքվող պայմանագրում:

8. Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության պայմանները սահմանվում է հրապարակային ծանուցման մեջ, որը ներառում է՝

8.1. աուդիտի ընդգրկման բնագավառները.

8.2. աուդիտի իրականացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները.

8.3. աուդիտի իրականացման արժեքը, ներառյալ բոլոր տեսակի հարկերն ու այլ ծախսերը.

8.4. Բանկի կողմից սահմանված այլ պայմաններ:

### ***ԲԱՃԻՆ III. ԱՆԿԱՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐԾՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԸ ԵՎ ՀԱՂԹՈՂԻՆ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ***

9. Բանկը, հիմք ընդունելով սույն կարգի II բաժնով սահմանված չափանիշները, աուդիտորական կազմակերպությունների կողմից ներկայացված մրցութային առաջարկությունները, իր կողմից աուդիտորական կազմակերպության ուսումնասիրության արդյունքները գնահատում է աուդիտորական կազմակերպությունների առաջարկությունները և նախապատվությունը տալիս է ամենաբարձր միավոր հավաքած աուդիտորական կազմակերպությանը:

10. Մրցութային առաջարկությունների գնահատման մեթոդը ներկայացված է սույն կարգի V բաժնում, որն ունի պարտադիր բնույթ:

11. Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության ժամանակ հաշվի է առնվում նաև բանկի և տվյալ աուդիտորական կազմակերպության միջև առկա աշխատանքային փորձը, մասնավորապես աուդիտորական կազմակերպության կողմից նախկինում մատուցած աուդիտորական ծառայությունների որակը:

12. Մրցույթում հաղթող կճանաչվի այն աուդիտորական կազմակերպությունը, որն ըստ Բանկի կողմից հաստատված մրցութային առաջարկությունների գնահատման մեթոդի, կհավաքի ամենաբարձր միավորները:

### ***ԲԱՃԻՆ IV. ՄՐԾՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ***

13. Բանկն անկախ աուդիտորական կազմակերպության ընտրությունը կատարում է բացառապես մրցութային կարգով և ՀՀ «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի «Մրցույթների կազմակերպումը և անցկացումը» գլուխ 3-ով ամրագրված և սահմանված դրույթներին համապատասխան:

14. Բանկը մրցույթի անցկացման մասին կատարում է հրապարակային ծանուցում՝ մրցույթն սկսվելուց առնվազն 30 /երեսուն/ օր առաջ: Մրցույթի մասին հրապարակային ծանուցումը պարունակում է ՀՀ «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով պահանջվող տեղեկությունները:

15. Մրցույթի մասին հրապարակային ծանուցումը կատարվում է զանգվածային լրատվության միջոցով կամ էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ:

16. Մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված պայմաններն ու տեղեկությունները կարող են փոփոխվել, որի դեպքում Բանկն այդ փոփոխություններն ու լրացումները կատարում է այն ձևով, ինչպես կատարել է մրցույթի մասին հրապարակային ծանուցումը:

17. Բանկն իրավունք ունի մրցույթի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

18. Մրցույթն անցկացնում է մրցութային հանձնաժողովը: Մրցույթի հայտերը բացվում են հրապարակային ծանուցման մեջ նշված առաջարկների ներկայացման օրվանից 7 /յոթ/ օրվա ընթացքում՝ մրցութային հանձնաժողովի հատուկ նիստում: Մրցույթի հայտերի բացման նիստում հրապարակվում են՝

ա/ մրցույթի հայտը ներկայացրած յուրաքանչյուր անձի նրա անունը /անվանումը/.

բ/ մրցույթի հայտեր ներկայացնելու համապատասխանությունը հրապարակային ծանուցման պահանջներին.

գ/ ամփոփ տվյալներ՝ մրցույթի հայտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

19. Մրցույթի հայտերն ամփոփելու օրը մրցութային հանձնաժողովը կազմում է մրցույթի արդյունքների մասին արձանագրություն, որտեղ նշվում է՝

ա/ մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի հայտերի ամփոփման վայրը, ամսաթիվը և ժամը, ինչպես նաև մրցութային հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

բ/ մրցույթի մասնակիցների անունները /անվանումները/ և գտնվելու /բնակության վայրը.

գ/ տեղեկություններ՝ մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումների և դրանց պատասխանների մասին.

դ/ մրցույթում հաղթողի անունը /անվանումը/.

ե/ այլ անհրաժեշտ տեղեկություններ:

Մրցութային հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը /առկայության դեպքում/ ներկայացվում է գրավոր, որը կցվում է արձանագրությանը և համարվում է դրա անբաժանելի մասը: Մրցույթի արդյունքներն ամփոփելուց և մրցույթում հաղթող ճանաչելու օրվանից հետո՝ հրապարակային ծանուցմամբ հայտարարված ժամկետում, Բանկը գրավոր ծանուցում է մրցույթի հաղթողին և առաջարկում է վերջինիս ցանկության դեպքում երկօրյա ժամկետում ստորագրել մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը:

20. Մրցույթին մասնակցել ցանկացող անձինք, մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված ժամկետներում, Բանկին ներկայացնում են տեխնիկական և ֆինանսական հայտեր՝ մեկ ծրարով:

**Տեխնիկական հայտը** պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունն ու փաստաթղթերը՝

ա/ մրցույթի մասնակի լրիվ անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարները, պետական գրանցման վկայականի, կանոնադրության, աուդիտորական գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի պատճենները.

բ/ ծառայությունների մատուցման բնութագիրը.

գ/ ծառայությունների մատուցման երաշխիքային ժամկետները.

դ/ նախորդ հաշվետու տարվա ընթացքում իր կողմից բանկերին նմանատիպ ծառայությունների մատուցման ցանկը՝ հաստատված բանկերի կողմից.

ե/ աուդիտորների անունները, ազգանունները, աշխատանքային փորձը, փոխկապակցվածության աստիճանը, աուդիտորների որակավորման և մասնագիտական վերապատրաստման վկայականների պատճենները.

զ/ տեղեկանք լիցենզավորող պետական լիազորված մարմնի կողմից այն մասին, որ աուդիտորական գործունեությամբ զբաղվելու լիցենզիան կասեցված կամ դադարեցված չէ.

է/ աուդիտորական կազմակերպության և աուդիտորների անկախությունը՝ ըստ ՀՀ «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետի, հաստատող փաստաթուղթ.

ը/ աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցներ /ներառյալ՝ աուդիտ իրականացնող խմբի ղեկավարի/ միջազգային հաշվապահական որակավորում /EJ-Սի-Սի-էյ, Փի-Սի-էյ և այլն/ ունեցող մասնագետների նվազագույնը քանակը.

թ/ մրցույթի մասնակցի հայեցողությամբ այլ անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք կհաստատեն իր կողմից մատուցվելիք ծառայությունների որակը:

**Ֆինանսական հայտը** պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

ա/ ծառայությունների մատուցման ընդհանուր գինը, որը պետք է ներառի բոլոր տեսակի ծախսերը, այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և այլն.

բ/ ծառայությունների մատուցման ընդհանուր գնի վճարման ձևն ու պայմանները.

գ/ մասնագիտական գործունեության ձախողման կամ պայմանագրով ամրագրված պարտականությունների չկատարման ռիսկի ապահովագրությունը և ռիսկերի բավարար փոխհատուցման չափը.

դ/ աուդիտի արժեքը.

ե/ մրցույթի մասնակցի հայեցողությամբ ծառայությունների մատուցման ֆինանսական կողմին վերաբերող այլ անհրաժեշտ տեղեկատվություններ և հիմնավորող փաստաթղթեր:

21. Մրցույթի հայտերը ներկայացվում են սոսնձված, կնքված և /կամ/ ստորագրված ծրարով, որտեղ պետք է ներառված լինեն Տեխնիկական և ֆինանսական հայտերը: Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից և մրցույթի մասին հրապարակային

ծանուցման մեջ նշված թվով կրկնօրինակներից, որոնց վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «կրկնօրինակ» բառերը: Միաժամանակ ծրարի վրա պետք է կատարվեն՝ մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված մրցույթի հայտի ներկայացման վայրի /հասցեի/ և «չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը» գրառումները: Մրցույթի հայտը գրանցվում է Բանկի գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը: Բանկը, մասնակցի պահանջով, կարող է տալ տեղեկանք՝ մրցույթի հայտն ընդունելու մասին:

22. Մրցութային հանձնաժողովը մրցութային առաջարկությունները գնահատելիս, առաջինը բացում է աուդիտորական ծառայության տեխնիկական կողմին վերաբերող առաջարկությունները: Եթե առաջին փաթեթում ներառված տեխնիկական առաջարկությունները բավարարում են Բանկի կողմից սահմանված տեխնիկական պայմաններին, ապա բացվում է երկրորդ փաթեթը: Հակառակ դեպքում, մրցութային հանձնաժողովը մրցութային առաջարկությունը մերժում է: Եթե երկրորդ փաթեթում ներառված ֆինանսական առաջարկությունները բավարարում են Բանկի կողմից սահմանված ֆինանսական պայմաններին, ապա մրցութային առաջարկությունները գնահատվում են Բանկի կողմից սահմանված գնահատման մեթոդին համապատասխան:

23. Սույն կարգի պահանջներին չհամապատասխանող մրցույթի հայտերը, ինչպես նաև մրցույթի հայտեր ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո տրված մրցույթի հայտերն առանց բացվելու մերժվում են և վերադարձվում են ներկայացնողին:

24. Մրցույթի մասնակիցները, մինչև մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտը, կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտերը: Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է սույն կարգով մրցույթի հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը: Մրցույթի մասնակիցները կարող են մրցույթի հայտերը Բանկին ուղարկել պատվիրված նամակով: Մրցույթի հայտերն ընդունվում են մինչև հրապարակային ծանուցման մեջ նշված հայտերի ներկայացման օրը:

25. Մրցութային հանձնաժողովը չկայացած է համարում մրցույթը, եթե՝  
ա/ ոչ մի հայտ չի ներկայացվել.

բ/ ներկայացված հայտերից ոչ մեկը չի համապատասխանում մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված պայմաններին, ինչպես նաև եթե հայտեր ներկայացնելը չի համապատասխանել սույն կարգին և մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին.

գ/ արտակարգ իրավիճակների պատճառով անհնար է դառնում մրցույթով նախատեսված աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը:

26. Մրցութային հանձնաժողովը Մրցույթի մասնակիցներին մրցույթի արդյունքների մասին գրավոր ծանուցում է՝ հրապարակային ծանուցմամբ հայտարարված ժամկետում:

27. Մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահից Բանկը հնարավորություն է ընձեռում մասնակիցներին ծանոթանալու սույն կարգին և նրանց է տրամադրում սույն կարգի պատճենը՝ նախատեսված կարգով:

### ***ԲԱԺԻՆ V. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ***

27. Մրցութային առաջարկությունների տեխնիկական չափանիշներն ու դրանց գնահատումը կատարվում է ելնելով հետևյալից.

27.1. Հայաստանի Հանրապետությունում աուդիտորական կազմակերպության ճանաչվածության աստիճանը /հեղինակությունը/ գնահատվում է 0-ից 3 միավոր.

27.2. աուդիտորական կազմակերպության միջազգային ճանաչումը /հեղինակությունը/ գնահատվում է 1-ից 3 միավոր ըստ միջազգային ռեյտինգավորմամբ ընդունված 10 լավագույն աուդիտորական կազմակերպությունների շարքից.

27.3. աուդիտորական կազմակերպության աշխատանքային փորձը՝ գնահատվում է 1-ից 3 միավոր.

27.4. աուդիտի աշխատանքներին մասնակցող մասնակիցների որակավորման մակարդակը և աշխատանքային փորձը՝ գնահատելիս հաշվի է առնվելու բանկային աուդիտի բնագավառում աշխատանքային փորձն ու ստաժը, որակավորման և մասնագիտական վերապատրաստման վկայականները՝ գնահատվում է 1-ից 3 միավոր.

27.5. աուդիտորական ստուգման իրականացման մեթոդները՝ գնահատվում է 1-ից 3 միավոր.

27.6. աուդիտի անցկացման ժամկետները՝ գնահատվում է 1-ից 3 միավոր.

27.7. աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները՝ գնահատվում է 1-ից 3 միավոր.

27.8. աուդիտի ընդգրկման բնագավառները՝ գնահատվում է 1-ից 3 միավոր:

28 Մրցութային առաջարկությունների ֆինանսական չափանիշներն ու դրանց գնահատումը կատարվում է ելնելով հետևյալից.

28.1. աուդիտի ծառայության արժեքը՝ հարկերը և ծախսերը ներառյալ և զուտ աուդիտի արժեքը, գնահատվում է 0-ից 1 միավոր.

28.2. աուդիտի վճարման ձևերը /ճախավճար, կատարողական ակտի ստորագրումից հետո, ըստ փուլերի/ գնահատվում է 1-ից 3 միավոր.

28.3. մասնագիտական գործունեության ձախողման կամ պայմանագրով ամրագրված պարտականությունների չկատարման ռիսկի ապահովագրությունը՝ ռիսկերի բավարար փոխհատուցման պահանջի տեսքով, գնահատվում է ըստ պահանջի դրամական չափի՝ 1-ից 3 միավոր:

### **ԲԱԺԻՆ VI. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

29. Մրցութուն հաղթող ճանաչված անկախ աուդիտորական կազմակերպության հետ Բանկը պայմանագիրը կնքում է հաղթող ճանաչված անձին Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո տասնհինգօրյա ժամկետում:

30. Հրապարակային ծանուցման մեջ նշվում են նաև աուդիտի իրականացման ժամանակաշրջանում գործող Բանկի տարածքային ստորաբաժանումների մասին տեղեկություններ:

31. Մրցութներն անցկացվում են Բանկի գլխավոր գրասենյակում:

32. Բանկը անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության հրապարակային ծանուցումը կատարում է յուրաքանչյուր տարվա հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում նվազագույն 1000 տպաքանակ ունեցող թերթում և իր ինտերնետային կայքում: Ընդ որում հրապարակային ծանուցումը տեղադրվում է ինտերնետային կայքի բոլոր լեզուներով: